

ուան վրայ մէջբերումներ ընելով և արխևեան պատմութեանն որ ըստ քննադատներու՝ գործն է Կիւրեղ Սկիւթուպոլսեցիին: Երբ Յորնաղ՝ Երուսաղէմի արքեպիսկոպոսը Պոլիս կը գտնուէր Ե. դարուն, Մարկիանոս կայսրը և իր կինը Բիւլքերա ըսին անոր. «Խմացանք թէ Երուսաղէմ կը գտնուի Ս. Մարիամի առաջին եւ հռչակաւոր եկեղեցին Գեթսեմանիի մէջ, ուր թաղուած է Ս. Կոյսին մարմինը. կը փափաքինք որ մեզ զրկուի անոր նշխարները կայսերական քաղաքին պահպանութեան համար»: Յորնաղ այն ատեն պատմեց անոնց թէ ըստ «հին եւ ստոյգ աւանդութեան» առաքեալները երեք օր կը լսէին զերեզմանին շուրջը հրեշտակներուն քաղցրալուր մեղեդիները: Երբ Սուրբ Կուսին զերեզմանը բացուեցաւ գոհացում տալու համար փափաքին Առաքեալի մը որ անոր մահուան եւ յուղարկաւորութեան ներկայ չէր, զերեզմանը պարապ գտան: Առաքեալները այն ատեն հասկցան թէ Ան որ ծնած էր Ս. Մարիամէն, հաճած էր ապականութենէ պահպանելու անոր մարմինը եւ երկինք ընդունելու ընդհանուր յարութենէն առաջ: Այս պարագան լսելով կայսրը և կայսրուհին խնդրեցին Երուսաղէմի եպիսկոպոսէն իրենց զրկել Ս. Կուսին դազազը և պատանքը: Մին եւ միւսը յետոյ զետեղուեցան Պոլսոյ Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ:

14. ՏԵԱՆՆԵՂԲՕՐ Ս. Յակոբայ այրը. — Յովսափատի Զորը ունի չորս նշանաւոր զերեզմաններ, որոնք են՝ Աբիսողոմի, Յովսափատի, Ս. Յակոբայ եւ Ս. Զաքարիայի զերեզմանները. զանց ընելով երեքը՝ կը գրենք Ս. Յակոբայ մասին: Յովհաննէս եպոս. հեւեալ կերպով կը նկարագրէ այս զերեզմանը. «Ան